

ԱՎԵՐԿՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԳՐՔԻ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ-ԳՈՎԱԶՂՆԵՐՈՒՄ

Ակնարկումը (allusion) անգլալեզու գովազդում, մասնավորապես գրքի գովազդում, հաճախակի գործածվող ոճական միջոց է: Ինչպես նշում է Ռոլան Բարտը, «տեքստը մշակույթի անհամար կենտրոններից վերցված մեջբերումների հյուսվածք է» (1, 147): Յուլիա Կրիստեվան, մեջբերելով Միխայիլ Բախտինին, խոսում է «գրական բառի» որպես *տեքստային մակերեսների հատման կետի*, այլ ոչ թե *կետի* (հաստատուն իմաստի) մասին, որպես երկխոսության մի շարք գրվածքների միջև՝ հեղինակի, հասցեատիրոջ (կամ կերպարի) և ժամանակակից կամ ավելի վաղ մշակութային համատեքստի» (2, 36): Ցանկացած տեքստ, այսպիսով, «մեջբերումների խճանկար է», ցանկացած տեքստ մեկ ուրիշ տեքստի «ներառումն ու փոխակերպումն է» (2, 37): Այս երևույթը հիմնականում կոչվում է *միջտեքստայնություն* (intertextuality):

Ակնարկումն «անուղղակի հղում է, բառի կամ արտահայտության միջոցով, որն է պատմական, գրական, առասպելական, աստվածաշնչային փաստի կամ առօրյա կյանքի փաստի՝ բանավոր կամ գրավոր խոսքում արված» (4, 187-9): Ընդ որում, ակնարկված բառի կամ արտահայտության իմաստը պետք է, դիտել որպես «ձև նոր իմաստի համար»: Այլ կերպ ասած, բառի կամ արտահայտության առաջնային իմաստը, որը համարում ենք հայտնի, ծառայում է որպես «անոթ, որի մեջ լցվում է նոր իմաստը» (4, 187-9): Տեղի է ունենում երկու իմաստների փոխադրեցություն:

Ներկա հոդվածի նպատակն է ուսումնասիրել, թե անգլալեզու գրքի հարցազրույց-գովազդներում ինչպե՞ս են գործածվում ակնարկումները, և դասակարգել որանք քառ առավել տարածված թեմատիկ խմբերի: Հոդվածի գործնական աղբյուրները վերցված են theBookseller.com կայքում տեղադրված զանազան գրքերի հեղինակների հետ հարցազրույցներից: Օրինակ ա-ն հատված է մի հարցազրույցից, որում հեղինակը նկարագրում է հին առասպելների վերամշակումը: Նա խոսում է հորինվածքին «էլեկտրական լարում» այսինքն այժմեականություն հաղորդելու մասին՝ ակնարկելով էլեկտրական հոսանքի դերը զանազան սարքեր աշխատեցնելու համար:

Ա) He describes the original tales from the Mabinogion as "strange, almost hallucinatory narratives, wonderfully rich in their imaginative worlds but sometimes they can be pretty bloody hard going

to read. What I hope this project does is give a bit of voltage to the imaginative core of the story, allowing that to live on." (10)

Էլեկտրական լարման երևույթի մասին խոսելու շնորհիվ՝ հեղինակը խուսափում է ավելի կրկար ու պակաս գունագեղ նկարագրությունից: Այս ակնարկման միջոցով նա իր խոսքը դարձնում է ավելի կենդանի և միաժամանակ ավելի հիշվող, ինչը գործնականում կարող է ազդել ընթերցողի տվյալ գրքով հետաքրքրվելու կամ չհետաքրքրվելու վրա:

Ակնարկներն ու հոլումները կարելի է անվանել *միանգամյա կայուն արտահայտություններ* (nonce-set-expressions), քանի որ գործածվում են միայն տվյալ առիթով (4, 189): Ակնարկումը միաժամանակ երկու համատեքստի մաս է կազմում: Առաջինն արտալեզվական, իրադրական համատեքստն է, որի մասին նշվում է ակնարկվող անձի, առարկայի կամ գրական ստեղծագործության միջոցով: Մյուս համատեքստն այն գովազդն է, որի տեքստում տեղ է գտել տվյալ ակնարկումը: Հենց այդ համատեքստն է ցույց տալիս, թե տվյալ դեպքում որ հատկանիշներն են հիմնականը: Եվ հենց գովազդի համատեքստն է ակնարկված բառին կամ արտահայտությանը հաղորդում նոր հարանշանակություններ (connotation) (5, 83):

Ակնարկման կազմում տարբերում ենք ներկայացնող տարրերը (penpezeintat, representing element) և փոխակերպող տարրերը (трансформант, transforming element): Ներկայացնող տարրերը համընկնում են սկզբնաղբյուրի տեքստի հետ. հենց նրանց միջոցով է կատարվում անուղղակի հղումը սկզբնաղբյուրին: Ընդ որում, ներկայացնող տարր կարող են լինել ոչ միայն բառերը, այլև շարահյուսական կառուցվածքը: Փոխակերպող տարրերը տեքստ-սկզբնաղբյուրը փոփոխելու միջոցով ստեղծում են լրացուցիչ իմաստ, որը հատուկ է լոկ տվյալ համատեքստին (6, 9-14):

Ինչպես նշվեց, հեղինակն ակնարկում անելիս կարող է օգտվել ամենատարբեր աղբյուրներից, պատմություն, գեղարվեստական գրականություն և առասպելներ, Աստվածաշնչային թեմաներ, առօրյա կյանքի երևույթներ:

Այն փաստը, որին վերաբերում է ակնարկումը, կոչվում է *ակնարկվող փաստ* (6, 6-7, 19-25): «Լերջինս կարող է լինել.

1. Պատումը՝ լայն իմաստով, գրական ստեղծագործություն, առասպել, Աստվածաշնչյան թեմա, ֆիլմ կամ ռեպրտաժ.

Այսպես, օրինակ Ի-ում ակնարկվում է 2000-ին նկարահանված և հետագայում գրքի վերածված բրիտանական «Բիլի Էլիոթ» ֆիլմը: Այն մի տղայի մասին է, որը հանկարծակի ինքն իր համար բացահայտում է պարը ու այնքան տարվում դրանով, որ ի վերջո, չնայած բազմաթիվ խոչընդոտ-

ներին, դառնում է պրոֆեսիոնալ պարող: Այս դեպքում հարցազրույցին մասնակցող հեղինակը ոչ թե գուգահեռ է անցկացնում, այլ ընդհակառակը՝ շեշտում է իր և ֆիլմի հերոսի տարբերությունը՝ իր կոչմանը հասնելու ճանապարհին: Նա ցույց է տալիս, որ իր բնտրությունը կանխատեսելի էր ու մասամբ կապված էր գրականության հետ՝ զործ ունեցող իր բարեկամների հետ:

Բ) Her mother, Linda Evans, is Sophie Kinsella's editor and her father and uncle were both writers. It is because of this that she always thought she would become an author. "It was never that big a deal—it's not like I'm Billy Elliot and I've never seen a ballet before." (8)

Իսկ օրինակ գ-ում կարդում ենք, թե ինչպես իրար հաջորդող աղետներից ցնցված հեղինակը մտաբերել է Աստվածաշնչում նկարագրված մորենիսների հարձակումը Նզիպտոսի վրա՝ որպես պատիժ: Առանց այս ակնարկման գուցեև այլքան ցայտուն արտահայտված չլիներ հեղինակի հուզական վիճակը, նրա ու իր հարազատների տազնապը: Ինչպես և վերը նշված օրինակ Բ-ում, այստեղ էլ զործ ունենք տվյալ գրքի հեղինակի կենսագրության մի որոշակի հատվածի հետ:

Գ) "I loved LA," Barry says. "I say I was born in Massachusetts but grew up in LA. But we went through earthquakes, riots, brush fires. I remember I was outside our apartment when the government was spraying chemicals to get rid of fruit flies. They said it wouldn't hurt you, but you should cover your cars because it will eat the paint off. So there was this "Apocalypse Now" squadron of helicopters spraying and I was on the balcony screaming, 'What's next LA, locusts?' That was when we decided to leave." (7)

2. Անվանում. լինի դա տեքստային կամ ոչ-տեքստային որևէ գործք, թե հայտնի կազմակերպության կամ ապրանքանիշի.

Այսպիսի ակնարկում բերված է օրինակ դ-ում, որը հատված է բրիտանական հեռուստատեսությունը ծաղրաբանականորեն գրքերի, հաղորդումների ու ներկայացումների հեղինակ Հարի Հիլի (կամ Մեթյու Հոլի, ինչպես իրեն անվանում են աշխատակիցները) հետ հարցազրույցից: Վերջինիս հեղինակած գանազան ծրագրերը թվարկելիս խոսվում է մի խանութ-կայքի մասին, որի անունը հիշեցնում է հայտնի amazon.com-ը: Կարելի է ենթադրել, որ այս անունը հենց գրքի հեղինակն է ստեղծել՝ հումորի նպատակով:

Դ) It is amazing what passes for television these days. A man sitting on top of a gigantic jelly singing "We are the world", accompanied by a knitted puppet does not immediately sound like award-winning programming. But this is the norm for "Harry Hill's TV Burp". Since 2001, it has been surreally taking the

mickey out of Britain's worst television. ... Hill also takes aim at the book trade, with a curiously familiar webpage of **shopping site Amazulu**. (9)

3. Ժամանակակից կամ պատմական անհատ. իրադարձություն կամ երևույթ.

Տվյալ հարցազրույցում հեղինակի երկրորդ վեպը նկարագրվում է Ֆրանց Կաֆկայի և Բենի Հիլի մասին ակնարկելով.

Ե) Cave's second novel, his first for 20 years, is to be published by Canongate in September... It is **part Franz Kafka, part Benny Hill**, according to Irvine Welsh. (12)

Ակնարկման գործածությունը ենթադրում է, որ ունկնդիրը կամ ընթերցողը տեղյակ է ակնարկված փաստի, առարկայի կամ անձի մասին, տվյալ դեպքում այն մասին, թե ինչպիսի մարդիկ են եղել և ինչպես են ստեղծագործել 20-րդ դարի կարևորագույն գերմանախոս գրողներից մեկը՝ Ֆրանց Կաֆկան, և հատկապես անգլիացի կատակերգական դերասան ու երգիչ Բենի Հիլը, որը հայտնի է իր հեռուստահաղորդաշարով:

Ինչպես կարելի է նկատել վերոհիշյալ օրինակներում, ակնարկում անեկյա սովորաբար որոշակի աղբյուր չի հիշատակվում: Սա էլ ակնարկման ու հղման հիմնական տարբերությունն է: Մյուսը կառուցվածքային տարբերությունն է. եթե հղման դեպքում բնագիրը բառ առ բառ կրկնվում է, ապա ակնարկման դեպքում պարզապես նշվում է մի բառ կամ արտահայտություն, որը կարելի է դիտել որպես հիմնաբառ (keyword) (4, 187-9):

Այսպես, օրինակ գ-ում ակնարկվում է արևմտյան մշակույթին բնորոշ մի ավանդույթ՝ Սուրբ Օնեոյան նվերները, որոնք կարող են նաև գրքեր լինել, գույնգույն գուլպաների մեջ դնելը: Այս ավանդույթի միջոցով հեղինակը խոսում է տոներին գրքի վաճառքն ավելացնելու՝ հրատարակիչների ակնկալիքի մասին:

2) An elegy to a lost age of the postal service is Short Books' big hope for a **topical Christmas stocking-filler**, with a high-profile publicity campaign set to speed the book on its way. (11)

Ակնարկումները հիմնված են փորձի ու գիտելիքների վրա, որոնք կուտակված հեղինակը ենթադրում է, որ իր ընթերցողներն ունեն նույնալիսի փորձ ու գիտելիքներ: Այն անուղղակի հղում է մի փաստի, իրադարձության, անհատի կամ երևույթի, որը ծանոթ է և հեղինակին, և ընթերցողներին, և որի միջոցով հեղինակն ավելի դիպուկ ու արտահայտիչ է դարձնում իր խոսքը:

Գրականություն

1. Barthes Roland Image Music Text: Essays selected and translated by Stephen Heath. London: Font ana Press. 1977. 226.
2. Kristeva Julia The Kristeva Reader: Ed. By Toril Moi. New York, Columbia University Press. 1986. 327.
3. Арнольд И.В. Стилистика современного английского языка. Л. 1973. 302.
4. Гальперин Л.Р. Стилистика английского языка: Учеб. для студентов иностранных языков. 2-е изд. перераб. и доп. - М.: Высшая школа. 1977. 332.
5. Дронова Е.М. "Проблемы перевода стилистического приема аллюзии в англо-ирландской литературе первой половины XX века." Вестник ВГУ. Серия "Лингвистика и межкультурная коммуникация". 2004. № 1. 83-86.
6. Кузнецова Е. "Обучение навыкам идентификации, интерпретации и формирования аллюзии русского языка студентов-иностранцев высокого продвинутого уровня." distinguishedlanguagecenters.org 10 Feb. 2010 http://www.distinguishedlanguagecenters.org/other/Book_1_Sociocultural_Competence_Part_Two_Allusions.pdf

Գործնական աղբյուրներ

7. A big Bru-ha-ha thebookseller.com 10 Dec. 09 <http://www.thebookseller.com/books/author-profiles/71683-a-big-bru-ha-ha.html>
8. Evans above thebookseller.com 10 Dec. 09 <http://www.thebookseller.com/books/author-profiles/93683-evans-above.html>
9. Harry's game thebookseller.com 10 Dec. 09 <http://www.thebookseller.com/books/author-profiles/92442-harrys-game.html>
10. Sheer Poetry thebookseller.com 10 Dec. 09 <http://www.thebookseller.com/books/author-profiles/96605-sheer-poetry.html>
11. Short Books hopes topical postie prose will deliver thebookseller.com 08 Dec. 09 <http://www.thebookseller.com/news/104421-short-books-hopes-topical-postie-prose-will-deliver.html>
12. The Book of Nick thebookseller.com 10 Dec. 09 <http://www.thebookseller.com/books/author-profiles/89764-the-book-of-nick.html>